ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԽՈԶՆԵՐԻ ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՐԱՐԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Համկ(բ)կ Կենտրոնական կոմիտեն 2-րդ հնգամյակի տարիներին նույնպես շարունակում էր հսկայական ուշադրություն դարձնել կոլտնտեսությունների ու սովխոզների նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, դրանք վնասարար տարրերից մաքրելուն, նոր, ստուգված բոլշևիկյան կադրերով համալրելուն[1]։ Սակայն այդ խնդիրն իրականացնելու համար սովխոզների ու մեքենատրակտորային կայանների և ընդհանրապես գյուղական կուսակցական ու կոմերիտական բջիջները բավականին թույլ էին, չունեին դասակարգային թշնամու դեմ պայքարի որոշակի փորձ ու հմտություն։ Ելնելով ստեղծված վիճակից, Համկ(բ)կ Կենտրոնական կոմիտեի և Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի միացյալ պլենումը 1933 թ. հունվարի 11-ին որոշեց մեքենատրակտորային կայաններում ու սովխոզներում ստեղծել կուսակցության արտակարգ մարմիններ՝ քաղբաժիններ։ «ՄՏԿ-ներն ու սովխոզները քաղաքականապես ամրապնդելու, ՄՏԿ-ների ու սովխոզների քաղաքական դերն ու ազդեցությունը գյուղում բարձրացնելու և կոլտնտեսություններում ու սովխոզներում մեր բջիջների քաղաքական ու տնտեսական աշխատանքները վճռականապես բարելավելու նպատակով,— ասված է պլենումի որոշման մեջ,— Համկ(բ)կ Կենտկոմը որոշեց բոլոր մեքենատրակտորային կայաններում ու սովխոզներում կազմակերպել քաղբաժիններ՝ ՄՏԿ-ների ու սովխոզների դիրեկտորների քաղաքական գծով տեղակալների գլխավորությամբ, որոնք միևնույն ժամանակ ՄՏԿ-ների ու սովխոզների քաղբաժինների պետերն են»[2]։

Կոլտնտեսություններում ու սովխոզներում մասսայական-քաղաքական լայն աշխատանք ծավալելու և դրանք կազմակերպչորեն ամրապնդելու հետ միասին քաղբաժինների գլխավոր խնդիրն էր այդ տնտեսությունների արտադրական գործունեության բարելավումը, սոցիալիստական դաշտերի բերքատվության բարձրացումը, ցանքի ժամանակին ավարտումը, անասունների լավագույն խնամքը, բերքահավաքի ու դրա հետ կապված բոլոր աշխատանքների անխափան իրականացումն ու պետական պարտավորությունների ժամանակին ու լրիվ կատարումը։ Քաղբաժինները պետք է ոչ միայն կարողանային իրականացնել ՄՏԿ-ների կողմից սպասարկվող և սովխոզների ենթաշեֆ կոլտնտեսությունների առջև դրված տնտեսական խնդիրները, այլև բացառեին հակասովետական տարրերի քայքայիչ աշխատանքը դրանցում։

Այդ խնդիրն իրականացնելու համար քաղբաժինները պետք է ակտիվորեն մասնակցեին սովխոզների ու կոլտնտեսությունների կադրերի ընտրությանը, արտադրության բոլոր ոլորտներում նրանց ճիշտ տեղաբաշխմանը, ան-

---

1 «ՍՄԿԿ-ն բանաձևերում և որոշումներում...», մաս III, Երևան, 1955, էջ 241։

2 Նույն տեղում, էջ 236—237։

ցիշում պայքար մղեին բոլոր նրանց դեմ, ովքեր իրենց անձնական շահերը հակադրելով հասարակականին, կձգտեին ձախողել գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում կուսակցության ձեռնարկումները։ Քաղբաժիններն այդ բանին պետք է հասնեին գյուղացիական աշխատավորական մասսաների և, առաջին հերթին, սովխոզային ու կոլտնտեսային աշխատավորության շրջանում քաղաքական, գաղափարադաստիարակչական ու բացատրական հետևողական աշխատանքի միջոցով, ամեն կերպ խուսափելով վարչարարական մեթոդներից և չմեկուսանալով անկուսակցական կոլտնտեսականներից ու սովխոզային բանվորներից։ Նրանք պետք է ստեղծեին անկուսակցական ակտիվներ՝ նրանց համախմբելով կուսակցական ու կոմերիտական բջիջների շուրջը։

Ի տարբերություն կուսակցական մյուս մարմինների, քաղբաժինները ոչ միայն կուսակցական, այլև տնտեսական մարմիններ էին։ Քաղբաժնի պետը, միաժամանակ լինելով քաղաքական գծով դիրեկտորի տեղակալ, նրա հետ մեկտեղ պատասխանատու էր արտադրական պլանների կատարման համար։ Քաղբաժինները չէին ենթարկվում կուշրջկոմներին, նրանք աշխատում էին կուսակցության Կենտրոնական կոմիտեի և հատուկ քաղաքական մարմինների ղեկավարությամբ ու ցուցումներով։

Մինչև քաղբաժինների հանդես գալը, սովխոզային և կոլտնտեսային կուսակցական կազմակերպությունների թույլ աշխատանքով, առաջադրանքների կատարումը երբեմն ձախողվում էր։ Չէին կատարվում ինչպես արտադրատնտեսական նշանակություն ունեցող, այնպես էլ բնակարանային ու կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարության պլանները։ Սովխոզների կուսակցականների ու կոմերիտականների հիմնական մասը զբաղեցնում էր գրասենյակային պաշտոններ և փաստորեն կտրված էր արտադրությունից։ Նման վիճակը մեծապես թուլացնում էր աշխատավոր մասսաների շրջանում կուսակցական ու կոմերիտական բջիջների ազդեցությունը՝ պարարտ հող ստեղծելով հակառակ ազդեցությունների ուժեղացման համար։

Աշխատանքների կազմակերպման վրա խիստ բացասաբար էր անդրադառնում աշխատավարձի գռեհիկ հավասարեցումը։ Անբավարար էին բանվորների կուլտուր-կենցաղային և բնակարանային պայմանները, որի պատճառով մեծ էր բանվորական ուժի հոսունությունը։ Պատշաճ մակարդակի վրա չէին գտնվում կոլտնտեսությունների քաղաքական ու տնտեսական-կազմակերպական ամրապնդման ուղղությամբ կատարվող աշխատանքները։

Անդրադառնալով քաղբաժինների խնդիրներին, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանը նշում էր, որ դրանք «...այն կազմակերպություններն են լինելու, որոնց միջոցով կուսակցությունն ուժեղացնելու է իր ազդեցությունը գյուղում, ամրացնելու է գյուղական կազմակերպությունները, մաքրելու է կոլտնտեսություններն ու սովխոզները հակահեղափոխական էլեմենտներից, վերացնելու է լոդրությունը կոլտնտեսություններում, բարձրացնելու է բերքատվությունը և ապահովելու կոլտնտեսությունների և սովխոզների կողմից պետական պարտավորությունների կատարումը»[3]։

Ավելորդ զուգահեռությունից խուսափելու նպատակով ՀամԿ(բ)Կ Կենտ-

[3] Հայկական ՍՍՀ հայ պարբերական մամուլի պետական կենտրոնական արխիվ (ՀՍՍՀ ՀՊՄ ՊԿԱ), ֆ. 2, ց. 1, գ. 287, թ. 45։

կոմը որոշեց քաղաքաժիններ ունեցող սովխոզներում ժամանակավորապես վերացնել կուսկոմիտեները, իսկ բաժանմունքներում, ֆերմաներում և վերանորոգման արհեստանոցներում ստեղծել կանոնադրական բջիջներ (կոմունիստների անհրաժեշտ քանակի դեպքում), բրիգադներում կուսակցական խմբեր՝ կազմակերպիչների գլխավորությամբ։

Ի կատարումն ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1933 թ. ապրիլյան որոշման, ՀամԿ(բ)Կ Անդրերկոմը նույն ամսին քննարկեց գյուղում կուսակցական աշխատանքների ուժեղացման ու գյուղական կազմակերպությունները ստուգված կադրերով ամրապնդելու հարցը և ընդունեց համապատասխան որոշում։ Մեկ ամիս անց՝ 1933 թ. մայիսին, Անդրերկոմը անդրադարձավ այդ հարցի կատարման ընթացքին։

ՀԿԿ Կենտկոմը, ի կատարումն այդ որոշման, բոլոր գյուղական ու շրջանային կուսկոմիտեներին, ՄՏԿ-ների ու սովխոզների քաղաքաժինների պետերին հանձնարարեց 1933 թ. մայիսի 28-ից մինչև հունիսի 20-ը կազմակերպել գյուղական կազմակերպությունների աշխատանքների լայն ստուգատես և վերացնել նկատված թերությունները։

1933 թ. մարտ-ապրիլ ամիսներից սկսեցին կազմակերպվել քաղաքաժիններ։ 1934 թ. երկրի սովխոզներում արդեն գործում էին 2021 քաղաքաժիններ[4], որոնք շուտով վերածվեցին գյուղում սոցիալիզմի կառուցման ուղղությամբ կուսակցության քաղաքականության կենսագործման կենտրոնների։

Մեր հանրապետության բոլոր խոշոր սովխոզներում, առաջին հերթին անասնապահական-անասնաբուծական, ստեղծվեցին քաղաքաժիններ։ Այդ տնտեսությունները Հայաստանում սովխոզային շինարարության ասպարեզում իրենց ուրույն տեղն էին գրավում և լուրջ տեսակարար կշիռ ունեին ոչ միայն հանրապետության, այլև Անդրֆեդերացիայի մասշտաբով։ Քաղաքաժիններ ստեղծվեցին Յանըղի, Սուլթանաբադի (Շուրաբադ), Աղբաբայի (Ամասիա), Բազարչայի, Այրիջայի, Սեմյոնովկայի, Լոռվա (Լոռտոհմսովխոզ), Ղարաղայայի (Ղարաղալա) խոշոր եղջերավոր անասնապահական, Ալագյազի (Արագած) ոչխարաբուծական, Լենինականի ճակնդեղաանասնապահական, Փարաքարի այգեգործական (№ 3) ու մի շարք այլ սովխոզներում։ Դրանք իրենց գործունեության առաջին օրվանից հսկայական աշխատանք կատարեցին այդ տնտեսությունների կազմակերպական-տնտեսական ու քաղաքական ամրապնդման ուղղությամբ։ Քաղաքաժինները կարճ ժամանակամիջոցում կարողացան բազմակողմանիորեն թափանցել սովխոզների աշխատանքների էության մեջ, հայտնաբերել թերություններն ու սխալները և ձեռնամուխ լինել դրանց վերացմանը։ Այսպես, քաղաքաժինների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հանրապետության սովխոզներում ստեղծված ծանր դրությունը հիմնականում պայմանավորված էր այդ տնտեսություններում աշխատանքի վատ կազմակերպմամբ։ Սովխոզների դիրեկտորների, կուսակցական ու կոմերիտական բջիջների անբավարար աշխատանքի հետևանքով անասունները չէին ապահովվել հարմարավետ գոմերով, անհրաժեշտ քանակի անասնակերով, չէին կայունացվել այդ ասպարեզում աշխատող կադրերը, որի հետևանքով մեծ չափերի էր հասել անասունների ու հատկապես մատղաշների անկումը։ Միայն 1933 թ. ութ ամիսների ընթացքում Այրիջայի

4 «ՍՄԿԿ-ն բանաձևերում և որոշումներում...», մաս III, էջ 328։

խոշոր անասնաբուծական սովխոզում 492 կովերից վիժել էին 158-ը, 234 հորթերից սատկել 107-ը։ Կադրերի հոսունության հետևանքով այս տնտեսությունում երկու ամսվա ընթացքում մեկ անասունի խնամքն անցել էր ութ մարդու ձեռքով։ Գրեթե նույն վիճակն էր տիրում նաև մյուս սովխոզներում։ Որոշ անասնաբուծական սովխոզներում (Լոռվա, Աղբաբայի, Արազդայանի) նույնիսկ չէին ավարտվել հողաշինարարական աշխատանքները։ Քաղբաժինների ջանքերով այդ ծանր վիճակը կարճ ժամանակահատվածում բարելավվեց։

Այրիջայի սովխոզի քաղբաժնի պետ Լ. Շահնազարյանի 1934 թ. փետրվարի 21-ի զեկույցից երևում է, որ քաղբաժնի ակտիվ աշխատանքի և աշխատավորների մոբիլիզացման շնորհիվ տնտեսությունը լուրջ հաջողություններ էր հասել։ Հաջողությամբ կազմակերպվել էր անասունների ձմեռումը, կառուցվել էին յոթ անասնագոմեր, հիմնովին վերանորոգվել հները, որի շնորհիվ անասնագոմերով ապահովվածության պրոբլեմը հիմնականում լուծվել էր։ Բարձրացել էր կուսկազմակերպության աշխատանքի բովանդակությունը, բրիգադների ներսում կազմակերպվել էին մշտական օղակներ։ Աշխատավորների բնակարանային և կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման, նրանց շրջանում ծավալված քաղաքական-մասսայական աշխատանքի շնորհիվ վերացել էր կադրերի հոսունությունը, բարելավվել էր անասունների խնամքը, զգալիորեն կրճատվել նրանց անկումը։ Լուրջ աշխատանք էր կատարվել կադրերի ուսուցման ուղղությամբ։ Կազմակերպվել էին տեխնիկայի տիրապետման խմբակներ, կթվորների, հորթապահների, բրիգադավարների և անասնապահների, հնձող մեքենաների վրա աշխատողների դասընթացներ։ Տնտեսությունում անգրագիտությունը վերացնելու նպատակով կազմակերպվել էին չորս լիկկայաններ, որոնցում ընդգրկվել էին բոլոր կիսագրագետ և անգրագետ աշխատողները։ Արդեն գործում էր 1-ին աստիճանի դպրոց, որտեղ ընդգրկված էին բոլոր դպրոցահասակ երեխաները, տարածվել էր 150 օրինակ թերթ ու ամսագիր, երկու ֆերմաներում լույս էին տեսնում պատի թերթեր։ Կազմակերպվել էր երեք քաղխմբակ, որոնցում ընդգրկված էին բոլոր կոմունիստները, կոմերիտականներն ու հարվածային բանվորները։ Քաղբաժնի ծավալած աշխատանքի շնորհիվ սովխոզը ոչ միայն դուրս էր եկել ծանր վիճակից, այլև կաթնամթերքների հանձնման տարեկան պլանը կատարել էր 102%-ով[6]։

Փաստերը ցույց են տալիս, որ քաղբաժիններն իրենց գործունեությամբ հսկայական բեկում մտցրին գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում, սովխոզներն ու կոլտնտեսություններն ամրապնդեցին կազմակերպչորեն ու տնտեսապես։

Սուլթանաբադի անասնաբուծական սովխոզի քաղբաժնի պետ Վ. Առուստամյանը զեկուցելով 1933 թ. աշխատանքի արդյունքների մասին, նշում էր այն հսկայական հաջողությունները, որ ձեռք էր բերել սովխոզն այդ թվականին։ Սովխոզը, գրում էր նա, ՀԿ(բ)Կ IX համագումարը դիմավորում է գյուղատնտեսական մթերքների և արտադրական պլանների գերակատարու-

---

5 Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (ՀՍՍՀ ՀԱՍՇ ՊԿԱ), ֆ. 202, ց. 1, գ. 4, թ. 96։

6 ՀՍՍՀ ՀՊՄ ՊԿԱ, ֆ. 2, ց. 1, գ. 57, թ. 106։

մով, անասունների ձմեռումը հաջող կազմակերպված։ Ստեղծվել է անասնակերի հատուկ բազա։ Պլանային 2015 հա-ի դիմաց կատարվել էր 2100 հա խոտհունձ և կուտակվել 1750 տոննա խոտ՝ նախորդ տարվա 1000 տոննայի դիմաց։ Անասնակերը, խտացրած կերերի հետ միասին, ապահովում էր տնտեսության անասուններին մինչև 1934 թ. մայիսի վերջը, չհաշված գարնանացանի համար առանձնացված 150 տոննան։ Հաջողությամբ էր կատարվել արտադրական և կուլտուր-կենցաղային նշանակության շինարարական օբյեկտների պլանը՝ հաշվետու տարին փակելով 102%-ով։

Իրականացնելով կուսակցության պահանջը՝ անասնահոտերի կոմպլեկտավորումը սեփական մատղաշների հաշվին կազմակերպելու մասին, տնտեսությունը կաթնատու կովերի գլխաքանակը հասցրել էր 529-ի, 1932 թ. 311-ի փոխարեն։ Գերակատարվել էին մսի և կաթնամթերքների տարեկան պլանները։ Կենտրոնական ֆերմայում կազմակերպվել էր կուսբջիջ, երկու ֆերմաներում՝ կուսխմբակ, տնտեսության կոմունիստների 80%-ն արդեն աշխատում էր արտադրության մեջ, կուսկազմակերպիչներով ապահովված էին բոլոր բրիգադները, կազմակերպվել էր քաղխմբակ, գրադարան, գործում էր ռադիոլսարանը, լույս էր տեսնում պատի թերթ և այլն։ Բրիգադիրների ու կթվորուհիների դասընթացներում վերապատրաստվում էին հիմնական կադրերը, արմատավորվում էր գործավարձը։ Լուրջ աշխատանք էր կատարվում բանվորների սննդամատակարարման և տնտեսական բարելավման ուղղությամբ։ Կուսակցական կազմակերպության և անկուսակցական ակտիվի զգոնության բարձրացման շնորհիվ հաջողվել էր հայտնաբերել և տնտեսությունից հեռացնել խորթ տարրերին[7]։ Լուսավ անասնաբուծական սովխոզի քաղբաժնի անմիջական աջակցությամբ կարգավորվեցին տնտեսության հողաշինարարական հարցերը. դա լրջորեն նպաստեց աշխատանքների հետագա կազմակերպմանը, ինչպես նաև անասունների մթերատվության բարձրացմանը[8]։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ սովխոզի աշխատավորությունը քաղբաժինը դիտում էր որպես իրեն հուզող հարցերի լուծման հիմնական կենտրոն։ Աշխատանքներում նկատվող թերությունների մասին աշխատավորները տեղյակ էին պահում քաղբաժնին, համոզված լինելով, որ դրանք վերջինիս կողմից կվերացվեն։

Բազարչայի սովխոզը (քաղբաժնի պետ՝ Ա. Իսրաելյան) ժամանակից շուտ՝ 1934 թ. հոկտեմբերի 1-ին, կատարել էր անասնապահական մթերքների արտադրության և կաթի ու յուղի մթերումների տարեկան պլանները։ Պետությանն էր հանձնվել 3006 ցենտներ կաթ՝ պլանային 2954-ի դիմաց, 74,4 ցենտներ յուղ՝ 69,3-ի դիմաց, 136 ցենտներ թուշի պանիր՝ 57-ի դիմաց և այլն։ Կարևոր է այն փաստը, որ նախորդ տարում, երբ սովխոզն ուներ նույն քանակությամբ կովեր, պետությանն էր հանձնվել 2440 ցենտներ կաթ։ Սովխոզն ընդգրկվել էր սովետների VII համագումարի անվան արտադրական արշավում և պարտավորվել մինչև տարեվերջ պլանից դուրս պետությանը հանձնել 300 ցենտներ կաթ[9]։

Քաղբաժինների աշխատանքների հետագա կազմակերպման տեսակետից

---

7 Նույն տեղում, թ. 18։

8 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 2497, թ. 9—10։

9 ՀՍՍՀ ՀՊՄ ՊԿԱ, ց. 1, գ. 3, թ. 19։

մեծ նշանակություն ունեցավ 1934 թ. հոկտեմբերի 7-ին ՀՍՍՀ հողժողկոմատի քաղսեկտորում հրավիրված անասնապահական սովխոզների քաղբաժինների պետերի հանրապետական խորհրդակցությունը։ Վերջինս արձանագրեց այն լուրջ հաջողություններ, որոնք ձեռք էին բերվել սովխոզներում, քաղբաժինների ակտիվ աշխատանքի շնորհիվ։ Խորհրդակցությունում ելույթ ունեցողները (Բազարչայի, Սեմյոնովկայի, Սուլթանաբադի, Լոռվա և Յանրղի անասնաբուծական սովխոզների քաղբաժինների պետերը), կանգ առնելով կարճ ժամանակահատվածում տնտեսությունների աշխատանքում կատարված լուրջ տեղաշարժի վրա, ընդգծում էին, որ այն ձեռք է բերվել առաջին հերթին սովխոզային աշխատավորության շրջանում մրցության ու հարվածայինների շարժման լայն տարածման շնորհիվ։ Խորհրդակցությունում միաժամանակ քննադատվեց շինարարական աշխատանքներում դրսևորվող դանդաղկոտությունն ու անկազմակերպվածությունը։

Հանդես գալով խորհրդակցությունում, ՀԿԿ Կենտկոմի գյուղբաժնի վարիչ Ա. Գուլոյանը նշեց այն հաջողությունները, որոնք ձեռք էին բերվել քաղբաժինների անդուլ աշխատանքի շնորհիվ և միաժամանակ մասնագետների ուշադրությունը հրավիրեց այնպիսի հարցերի վրա, որոնց համակողմանի լուծումն է՛լ ավելի կբարձրացներ քաղբաժինների հեղինակությունը՝ նրանց աշխատանքները կդարձներ ավելի բովանդակալից ու նպատակասլաց և կնպաստեր կուսակցության կողմից սովխոզների առջև դրված խնդիրների հաջող կատարմանը։

Այնպիսի հարցեր, ինչպիսիք էին սովխոզներում աշխատանքի ու աշխատավարձի ճիշտ կազմակերպումը, բանվորների բնակարանային, կուլտուրա-կենցաղային պայմանների բարելավումը, աշխատանքի նկատմամբ պատասխանատվության ու սրտացավության բարձրացումը, դիմազրկության ու անտարբերության վերացումը, մերձակա կոլտնտեսային աշխատավորության շրջանում քաղաքական-մասսայական լայն աշխատանքի ծավալումը, սովխոզի և կոլտնտեսության կապերի սերտ աճը, սովխոզային բանվորների և կոլտնտեսային աշխատավորության միջև փոխադարձ հարգանքի ու վստահության ամրապնդումը, կուսակազմակերպությունների շուրջն անկուսակցական լայն մասսաների համախումբը և այդ ճանապարհով միաձույլ աշխատավորական կոլեկտիվի ստեղծումը պետք է գտնվեին սովխոզների քաղբաժինների ուշադրության կենտրոնում։ Որոշ քաղբաժինների պետեր (Լոռի, Ալագյազ), մոռանալով իրենց հիմնական խնդիրները, չափից ավելի էին տարվել վարչական ու տնտեսական հարցերով։ Խորհրդակցությունում ընդգծվեց, որ քաղբաժնի պետը, որպես դիրեկտորի քաղաքական գծով տեղակալ, պարտավոր է ապահովել սովխոզի տնտեսական խնդիրների կատարումը՝ քաղաքական-մասսայական աշխատանքների ծավալման, կուսակցական ու կոմերիտական ուժերի ճիշտ տեղաբաշխման, կուսակցական կազմակերպության շուրջն անկուսակցական ակտիվի համախմբման և բոլոր բանվորների ուժերի մոբիլիզացման հիման վրա[10]։ «...Եթե մենք ճիշտ բաշխենք մեր կուսակցական ուժերը, եթե ապահովենք կուսակցական-մասսայական աշխատանքը,— արձանագրեց խորհրդակցությունը,— ապա անպայման կկարողանանք իրագործել այն խնդիրները, որոնք դրել է կուսակցությունը մեր սով-

10 Նույն տեղում, թ. 12։

խողների առջև, ձեռնարկություններ, որոնք գտնվում են սոցիալիստական անասնաբուծությունը բարձրացնելու համար մղվող պայքարի առաջավոր դիրքերում։ Այն ժամանակ մենք կկարողանանք այստեղ ևս՝ անասնապահության մեջ բեկում ստեղծելու համար պայքարում, արդարացնել այն բացառիկ վստահությունն ու հույսը, որը դրել է մեզ՝ քաղաքաժինների աշխատողներիս վրա, մեր ամբողջ կուսակցությունը...»[11]։

Ղեկավարվելով կուսակցական ու սովետական մարմինների որոշումներով ու ցուցումներով և կյանքում կենսագործելով վերը նշված խորհրդակցության պահանջները, քաղաքաժիններն աշխատանքի լծվեցին նոր եռանդով, որը տվեց իր արդյունքները։ Այսպես, Լենինականի ճակնդեղաանասնապահական սովխոզը անասունների ձմեռման շրջանը հաջող կազմակերպման նշանաբանով 1934 թ. հոկտեմբերից ընդգրկվեց համամիութենական անասնապահական մրցության մեջ և քաղաքաժնի անմիջական օգնությամբ ու ղեկավարությամբ (պետ՝ Վ. Սաղաթելյան) հասավ լուրջ հաջողությունների։ 1935 թ. առաջին եռամսյակի կաթնատվության պլանը կատարվեց 273, իսկ մսամթերմանը՝ 114%-ով։ Արմատական բեկում կատարվեց մատղաշների և նոր ծնված հորթերի խնամքի գործում։ Եթե 1933 թ. նոր ծնված հորթերի անկումը կազմում էր 60%, ապա 1935 թ.՝ 3,5%։ 1932 թ. համեմատությամբ 1935 թ. սովխոզի կովերի կաթնատվությունը բարձրացավ ավելի քան 2,5 անգամ՝ հասնելով 10,3 ցենտների[12]։ Այդ հաջողությունները պայմանավորված էին ուժերի ճիշտ տեղաբաշխմամբ, գործավարձի արմատավորմամբ, բանվորների կուլտուր-կենցաղային պայմանների բարելավմամբ և այլն։ Ամառանոցներում կառուցվել էին բանվորական տներ, ծածկեր, բրիգադներում լույս էին տեսնում իլլիչովկաներ, որոնց էջերում պրոպագանդվում էին ձեռք բերված հաջողությունները, մասսայականացվում էր առաջավոր փորձը, նշվում թերությունները՝ ցույց տալով դրանց ծնող պայմաններն ու վերացման ուղիները։ Աշխատանքի լավագույն կազմակերպման շնորհիվ աճեց սովխոզի անասունների գլխաքանակը՝ հասնելով 1200-ի, բարձրացավ ֆուրաժային կովի կաթնատվությունը. այն 1935 թ. օրական 3,5 կգ-ից 1936 թ. հասավ 5,6 կգ-ի։ Սովխոզը 1936 թ. առաջին եռամսյակում արտադրեց 855 ցենտներ կաթ՝ 1935 թ. նույն ժամանակահատվածի 313 ցենտների դիմաց։

Քաղաքաժնի նախաձեռնությամբ 1936 թ. հունվարի 30-ին սովխոզի ֆերմայում հայտարարվեց ստախանովյան տասնօրյակ։ Մարտի 25—30-ը ֆերմայի աշխատողները մասնակցեցին անասնապահների ստախանովյան հնգօրյակին։ Ստախանովյան կթվորներ Ավետիս Զոհրաբյանը և Եդոր Պապիկյանն իրենց խնամած կովերից այդ տարի համապատասխանաբար ստացան 20 և 19 ցենտներ կաթ, որոնք ժամանակին ռեկորդային ցուցանիշներ էին։ Ստախանովյան բրիգադիրներ Մոսկով Սիմոնյանը և Մխիթար Պողոսյանը 100-ական կովի փոխարեն խնամում էին 200 կով։ Ստախանովյան կթվորներ Թորոս Մինասյանը, Մացակ Սիմոնյանը և Գալյա Տիմայովան 20-ական կովի փոխարեն խնամում էին 25-ական կով և իրենց եռամսյակային պլանները կատարում 140—165%-ով։ Ֆերմայում ստախանովականների թիվը հասնում էր 33-ի։ Նրանք առաջին եռամսյակի պլանները կատարել էին 130—180%-ով։

---

11 Նույն տեղում, ֆ. 2, ց. 1, գ. 60, թ. 31։

12 Նույն տեղում, գ. 62, թ. 58։

Ֆերմայի վարիչ Գրիշա Ավետիսյանը երեք տարի անընդմեջ աշխատում էր Ֆերմայում և իր լավագույն աշխատանքի շնորհիվ պետությանը տվել էր 30 հազար ռուբլու օգուտ[13]։

Քաղաքաժինների հետևողական ու համառ աշխատանքի շնորհիվ նման առաջընթացն ընդհանուր երևույթ էր դարձել նաև մյուս սովխոզների համար։ Աճում էր այդ սովխոզների տնտեսական հզորությունը և դրանք դառնում էին օրինակելի տնտեսություններ։ Այսպես, օրինակ, «Արարատ» տրեստի № 3 սովխոզը, հաղորդում էր հայկական հեռագրական գործակալությունը, մեծ Հոկտեմբերի 19-րդ տարեդարձը (1936) դիմավորում է որպես օրինակելի տնտեսություն։ Սովխոզը գերակատարել է պետությանը հանձնվելիք բոլոր տեսակի գյուղատնտեսական մթերքների պլանները[14]։

Բաղում փաստեր կարելի է վկայակոչել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման այդ դժվարին փուլում քաղաքաժինների գործունեության բարերար ազդեցությունն ու մեծ նշանակությունը ցույց տալու համար։ Կուսակցությունը ճիշտ ժամանակին կյանքի կոչեց այդ մարմինները, որոնք գյուղական աշխատավորների շրջանում իրենց ծավալած քաղաքական-դաստիարակչական և կուլտմասսայական աշխատանքի շնորհիվ կարողացան էական փոփոխություններ մտցնել նրանց գիտակցության մեջ հոգուտ սոցիալիզմի, դրանով իսկ դյուրացնել նրանց շրջադարձը դեպի սոցիալիստական արտադրահարաբերությունները։ Քաղաքաժինները մասսաների մեջ քաղաքական-դաստիարակչական աշխատանքի հետ մեկտեղ խոշոր աշխատանք կատարեցին սովխոզներում, ՄՏ կայաններում ու կոլտնտեսություններում աշխատանքներն այնպես կազմակերպելու համար, որպեսզի հնարավորություն լիներ գյուղացիական մասսաներին ապացուցել սոցիալիստական խոշոր հողօգտագործման առավելությունները անհատական տնտեսությունների, սոցիալիստական կենցաղավարության գերազանցությունը՝ մասնավորի նկատմամբ։

Քաղաքաժիններն իրենց գործունեության սկզբնական փուլում, հաշվի առնելով սովխոզային բանվորների կուլտուր-կենցաղային, բնակարանային ու սննդամթերքի մատակարարման ասպարեզում եղած դժվարությունները, քաղաքական-դաստիարակչական աշխատանքների հետ մեկտեղ, մեծ ուշադրություն դարձրին այդ հարցերին։ Նրանք լուրջ աշխատանք ծավալեցին սովխոզներում բնակարանային, կուլտուրկենցաղային շինարարության արագացման ուղղությամբ։ Բնակարանների հետ մեկտեղ կառուցվեցին ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ, գրադարաններ, դպրոցներ, ճաշարաններ, բաղնիքներ, լվացքատներ և այլն։ Կյանք մտավ կինոն, թատրոնը։ Բանվորների սննդի հարցը բարելավելու նպատակով քաղաքաժինների ջանքերով սովխոզներում ստեղծվեցին բանվորական մատակարարման օժանդակ տնտեսություններ, որոնց արտադրանքն ամբողջովին տրամադրվում էր նրանց բանվորների կարիքները հոգալուն։ Բացի այդ, քաղաքաժինների ձեռնարկած վճռական միջոցների շնորհիվ սովխոզներում ավելի ինտենսիվացվեցին աշխատանքները, սկսեցին ավելի լիարժեք օգտագործել սովխոզների հողատարածությունները, ագրոտեխնիկական միջոցների ճիշտ կիրառման հետևանքով ավելի բարե-

13 Նույն տեղում, գ. 66, թ. 86։

14 «Коммунист», 3. XI. 1936.

լավվեց հողամշակությունը և բարձրացավ արտադրողականությունը։ Լուրջ ուշադրություն դարձվեց անասնահոտերի կազմի ազնվացմանը, զոոտեխնիկական և անասնաբուժական միջոցների բարելավման շնորհիվ կրճատվեց անասունների անկումը, բարձրացավ մթերատվությունը։ Այդ ամենը բարերար ազդեցություն ունեցավ գյուղացիության վրա։ Գյուղի աշխատավորներն սկսեցին ավելի հաճախ լինել այդ տնտեսություններում, օգտվել նրանց աշխատանքային փորձից։ Քաղբաժինների ծավալած համակողմանի աշխատանքի շնորհիվ սովխոզները դարձան համատարած շահութաբերության, բարձր բերքատվության ու մթերատվության կենտրոններ։ Բոլոր սովխոզները 1934—1935 թթ. ոչ միայն կատարեցին իրենց արտադրական պլանները, այլև գերակատարեցին պետական հանձնումների պլանները։

Քաղբաժինների դրական աշխատանքի շնորհիվ 1934 թ. և հնգամյակի հետագա տարիներին ավելի ամրապնդվեցին սովխոզների ու կոլտնտեսությունների կապերը։ Սովխոզները, ելնելով ստեղծված տնտեսական հնարավորություններից, հսկայական աշխատանքային ու քաղաքական օգնություն էին ցույց տալիս կոլտնտեսություններին։ Նրանք իրենց տեխնիկական միջոցներով օգնում էին կոլտնտեսային դաշտերի հերկման, բերքահավաքի, կալման և այլ աշխատանքներին։ Քաղբաժինները սովխոզների միջոցով կարողացան մեծ գործ կատարել կոլտնտեսային ապրանքային ֆերմաների ստեղծման, դրանց անասնահոտի ազնվացման, անասունների խնամքի լավագույն կազմակերպման ուղղությամբ։ Սկսած 1934 թ. տարեկան մի քանի հազար գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուններ ու խոզեր էին տրամադրվում կոլտնտեսություններին՝ գրանցում սոցիալիստական անասնապահությունը զարգացնելու համար։ Քաղբաժինները, իրականացնելով կուսակցության պահանջները, հատուկ աշխատանք էին կատարում նաև կովազուրկ կոլտնտեսականներին մատղաշներով ապահովելու համար։

Լուրջ նշանակություն ուներ այն աշխատանքը, որ կատարում էին քաղբաժինները՝ կոլտնտեսությունները կադրերով ապահովելու, նրանց կադրերի պատրաստման ու վերապատրաստման, այդ տնտեսություններում ծավալված դաստիարակչական, կուլտմասսայական աշխատանքների ուղղությամբ։ Դրա հետևանքով կարճ ժամանակահատվածում բարձրացավ կոլտնտեսականների ու աշխատավոր անհատ գյուղացիների դասակարգային գիտակցությունն ու զգոնությունը։

Կուսակցությունն ակնդետ հետևում էր գյուղի սոցիալիստական զարգացման ընթացքին ու դրան համապատասխան կատարում անհրաժեշտ ճշգրտումներ։ 1934 թ. ՀամԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի նոյեմբերյան պլենումը, քննարկելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման տվյալ փուլում քաղբաժինների գործունեությունը, գտավ, որ ՄՏ կայանների քաղբաժինները հաջողությամբ են կատարել իրենց առջև դրված խնդիրները և առաջարկեց վերացնել ՄՏ կայանների քաղբաժինները, դրանք վերածելով սովորական կուսակցական մարմինների[15]։ Միաժամանակ պլենումը որոշեց ոչ մի փոփոխություն չկատարել սովխոզների քաղբաժինների կազմում։ Սակայն 1935 թ. հետո, երբ կուսակցական շրջանային կոմիտեները գյուղատնտեսական աշխատանքների ղեկավարման բավականին փորձ էին կուտակել,

15 «ՄԿԿ-ն բանաձևերում և որոշումներում...», մաս III, էջ 331։

սովխոզների քաղբաժինները արդեն աստիճանաբար դադարում են կուսակցության արտակարգ մարմիններ լինելուց։ Դեռևս 1934 թ. Համկ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի օգոստոսի 8-ի որոշմամբ նորից թույլատրվեց սովխոզներում կուսկոմիտեների ընտրությունը[16]։

Սովխոզների կազմակերպական ու տնտեսական հետագա ամրապնդումը և դրանցում կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունների դերի անհամեմատ մեծացումն աստիճանաբար վերացնում էին տնտեսական հարցերով քաղբաժինների զբաղվելու անհրաժեշտությունը։ Քաղբաժինների գործունեության հիմնական ուղղությունը դարձան կուսակցական-կազմակերպական և քաղմասսայական աշխատանքները։ Այդ շրջանում, չնայած քաղբաժիններն այլևս չէին զբաղվում տնտեսական հարցերով, այնուամենայնիվ, մասսաների շրջանում ծավալած կուսակցական-քաղաքական ու կուլտմասսայական աշխատանքի միջոցով, մոբիլիզացնում էին նրանց ուժերը, տվյալ տնտեսության առջև դրված տնտեսական-արտադրական խնդիրների հաջող կատարման համար։

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղբաժինները կյանքի կոչվելով գյուղի սոցիալիստական վերակառուցման պատասխանատու շրջանում կարողացան հաջողությամբ գլխավորել գյուղի աշխատավորության ծավալած դասակարգային պայքարը և հսկայական ծառայություն մատուցել սովխոզների ու կոլտնտեսությունների քաղաքական և կազմակերպական ամրապնդմանը։ Ուժերի ճիշտ տեղաբաշխման և աշխատավոր մասսաների մոբիլիզացման ու համախմբման շնորհիվ դրանք մեծապես նպաստեցին սոցիալիստական իսկական օրինակելի տնտեսությունների կազմակերպմանը։

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ПОЛИТОТДЕЛОВ СОВХОЗОВ АРМЕНИИ

АРАРАТ САРКИСЯН

Резюме

В период социалистической реконструкции сельского хозяйства в деревнях происходили огромные изменения классового и социально-экономического характера, в результате чего усиливалась классовая борьба. Кулацкие и другие чуждые элементы проникали в социалистическое хозяйство, в том числе и в совхозы, с целью внутреннего подрыва хозяйства.

В связи со сложившейся обстановкой объединенный Пленум ЦК и ЦКК ВКП (б) 11 января 1933 г. принял решение об организации политических отделов в МТС и совхозах. Политотделы были чрезвычайными органами партии в этих хозяйствах, в функции которых входила не только партийно-политическая, воспитательно-массовая, но и хозяйственная работа. Они своей активной работой способствовали выявлению и ликвидации чуждых классовых элементов, укреплению тем самым организационно-хозяйственного и политического положения совхозов.

[16] М. Л. Богденко, И. Е. Зеленин, Совхозы СССР, М., 1976, с. 70.